Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 535 - Ա
որոշման

«ԳՅՈՒՄՐՈՒ «ԵՐԵԽԱՆԵՐԻ ՏՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳԻՐԸ

1.	Ծրագրի նպատակը	Դժվար քայլող երեխաների համար տեղաշարժի հեշտացման, անվտանգության ապահովման և կյանքի որակի բարելավման համար Գյումրու «Երեխաների տուն» պետական ոչ առևտրային կազմակերպության մասնաշենքերի, լողավազանի վերանորոգում և պարսպի կառուցում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	ԱՄՆ-ի «Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն» (ՍՕԱՐ) հիմնադրամ (150 Ն. Ռադնոր Չեսթեր Ֆ.200, Ռադնոր 19087 Փենսիլվանիա, ԱՄՆ)
4.	Ծրագիրը կատարողը	«Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն (ՍՕԱՐ)-Հայաստան» բարեգործական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Թբիլիսյան խճուղի 19, ՀՎՀՀ՝ 00148272)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզի Գյումրի Թամանյան փողոց, 17 շենք Գյումրու «Երեխաների Տուն» պետական ոչ առևտրային կազմակերպություն, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	13,349,514 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Գյումրու «Երեխաների Տուն» պետական ոչ առևտրային կազմակերպություն (Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, քաղ. Գյումրի, Թամանյան

		փողոց, 17 շենք, ՀՎՀՀ՝ 05521918)
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2024 թվականի օգոստոսի 20-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 30-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Գյումրու «Երեխաների տուն» պետական ոչ առևտրային կազմակերպության մասնաշենքերի, լողավազանի վերանորոգում և պարսպի կառուցում՝ 13,349,514 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2024 թվականի օգոստոսի 20-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 30-ը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը և նախատեսվող գինը	Գյումրու «Երեխաների տուն» պետական ոչ առևտրային կազմակերպության մասնաշենքերի, լողավազանի վերանորոգման և պարսպի կառուցման աշխատանքների իրականացում՝ 13,349,514 դրամ առանց ավելացված արժեքի հարկի:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Նախատեսված չեն:
12.	Համագործակցություն պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի իրականացման ընթացքում հիմնադրամը համագործակցում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և տեղական ինքնակառավարման մարմինների հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով բարեգործության ոլորտը համակարգող լիազորված մարմնին կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

05.08.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ